ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/160

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
Մասնակից՝ «Արջիջի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Արջիջի» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Փոթոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/5-ԴԵՂՈՐԱՅՔ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, դեղորայքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.03.2022թ.-ի թիվ 26/26-1/5415-2022 գրությամբ «Արջիջի» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 22.03.2022թ.-ի 20/377 գրության հիման վրա, 30.03.2022թ.-ին «Արջիջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 30.03.2022թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 01.04.2022թ.-ի թիվ 148-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, բողոքի քննությունը 05.04.2022թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

06.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/160 համարի ծածկագիրը:

13.04.2022թ.-ին և 22.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 13.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.04.2022թ.-ին:

2. ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 22.03.2022թ.-ի 20/377 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով սույն գրությամնը կից Ձեզ եմ ներկայացնում «ՀՀ ԱԱԾ-ՌԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/5-ԴԵՂՈՐԱՅՔ» ծածկագրով ընթացակարգի մասնակցին՝ «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ին վերաբերող փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/5-ԴԵՂՈՐԱՅՔ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արջիջի» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արջիջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 30.03.2022թ.-ի գրությամբ դիմել է «Արջիջի» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2022թ.-ի թիվ 26/26-1/5415-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Արջիջի» ՍՊԸ-ն, 16.04.2022թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

««ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ն մասնակցել է՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից հայտարարած թիվ «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/5-ԴԵՂՈՐԱՅՔ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին:

16.03.2022թ-ին ժամը 16:22 էլեկտրոնային ծանուցմամբ ստացել ենք «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին», որի մեջ մանրամասն նկարագրվում չեն եղել հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կից ներկայացնում ենք էլեկտրոնային փոստից արտատպված ծանուցումը և ծանուցման բովանդակությունը:

Ինչպես նշել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանը իր ՍՑ-ԼՕ-2021/336 ընթացակարգով կայացրած որոշման մեջ, կարգի 41-րդ և հրավերի՝ 8.11-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի՝ գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել

անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Մինչդեռ պատվիրատուի կողմից ուղարկված «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» ծանուցման մեջ նկարագրված չեն թե ինչ անհամապատասխանություններ է գնահատող հանձնաժողովը արձանագրեր ինչպես նաև ծանուցման մեջ կցված չի եղել թիվ 2 արձանագրությունը:

Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ խոսքը գնում է հենց ծանուցման մեջ, իսկ այլ շտկում կատարելու վերաբերյալ ծանուցում «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/5-ԴԵՂՈՐԱՅՔ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում պատվիրատուի կողմից չի ստացվել:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և հրավերի 8.11-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքը: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանացրեւ անհամաապատասԽանութւունո. ապա դրանից հետո նոր առաջարկել կատարեւ շտկում (տես ՍՅ-ԼՕ-2021/336 ընթացակարգով կայացված որոշումը):

Փաստորեն «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» ծանուցումը պատվիրատուն ուղարկել է 16.03.2022թ-ին ժամը 16:22, որի պահին ոչ էլեկտրոնային գնումների համակարգում, և ոչ էլ գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված չի եղել թիվ 2 Արձանագրությունը: Հետևաբար կարելի է փաստեր որ ծանուցման պահին անհամապատասխանությունները արձանագրված չեն եղել:

Ամեն դեպքում, օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետում մեր կազմակերպության կողմից ձեռնարկվել են ողջամիտ ու բավարար միջոցներ մրցույթի հրավերով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու համար և օրենսդրությամբ սահմանված ժամկետում կատարվել է ապրանքի ամբողջական նկարագրի շտկում:

Նաև ցանկանում ենք բերել հակադարձ փաստարկներ և ապացույցներ առ այն, որ պատվիրատուն կայացրել է սխալ որոշումներ, որոնք ներառել է իր թիվ 3 արձանագրության մեջ:

Մասնավորապես, պատվիրատուն նշել է, որ բացառությամբ N 9 չափաբաժնի, թերի են շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝

N 5 չափաբաժնի մասով ներկայացված է նաև չգրանցված դեղորայք

N 22 չափաբաժնի մասով ներկայացված է նաև տեխնիկական բնութագրին չհամապատասխանող դեղորայք

N 57 չափաբաժնի սասով ներկայացված է նաև տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ղեղորայք

N 5 չափաբաժնի մասով ներկայացվել են Ասպիրին Կարդիո և Ասպիկոր ֆիրմային անվանումներով դեղերը՝ համապատասխան արտադրողներով:

Կից ներկայացնում ենք ապացույցներ, որ վերոնշյալ 2 դեղերն էլ գրանցված են ՀՀ-ում՝

ա. Արտապատկերում դեղերի պետական գրանցամատյանից, որ Ասպիրին Կարդիո դեղը գրանցված է ՀՀ-ում

բ. Ասպիկոր դեղի ՀՀ-ում գրանցման հավաստագիրը

գ. Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի եզրակացությունը, որ ներմուծման պահին դեղը գրանցված է եղել ՀՀ-ում:

դ. ՀՀ ԱՆ կողմից տրված ներմուծման հավաստագիրը

Համաձայն դեղերի մասին գործող օրենքի 7-րդ գլխի 23-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանվում է, որ

Գրանցման ժամկետն ավարտվելուց հետո թույլատրվում է մինչև պիտանիության ժամկետի ավարտը իրացնել այն դեղերը, որոնք ներմուծման հավաստագրի տրման օրը, իսկ Հայաստանի Հանրապետությունում արտադրվածները՝ արտադրողի կողմից իրացման հաշիվ ապրանքագրի տրման օրը, օրենքով սահմանված կարգով գրանցված են եղել Հայաստանի Հանրապետությունում:

Այսպիսով՝ հիմք ընդունելով դեղերի մասին օրենքը պատվիրատուն իրավունք չուներ մերժել Ասպիկոր դեղը, քանի որ դեղը ներմուծվել է այն ժամանակ, երբ դեղը գրանցված է եղել ՀՀ-ում և թույլատրված է դեղի ազատ շրջանառությունը, հետևաբար չի խախտվել Դեղերի մասին օրենքը, Գնումների մասին օրենքը և կատավարության որոշումներով սահմանված դրույթները:

Նաև, մրցույթի հրավերով չի նշվել որ հահտը ներկայացնելու օրվա դրությամբ դեղը պետք է ներառված լինի ՀՀ դեղերի գրանցամատյանում (ռեեստր):

N 22 չափաբաժնի մասով ներկայացվել են ԲակՏՐՈՆՆ Ֆորտե, Բակտրիմ ֆորտե և Բակտրիմ ֆորտե անվանումներով դեղերը համապատասխան արտադրողներով:

Ինչպես երևում է թիվ 3 Արձանագրությունից, այս դեպքում պատվիրատուն չի վիճարկում որևէ դեղի չգրանցված լինելու փաստը, այս նշում է, որ ներկայացված է նաև տեխնիկական բնութագրին չհամապատասխանող դեղորայք:

Համաձայն ՀՀ կառավարության 2 մայիսի 2013 թվականի N 502-Ն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետ

Եթե Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) առկա են նույն բաղադրատարրերով դեղի այլ գրանցված տարբերակներ, ապա դեղի գնման տեխնիկական բնութագիրը կազմվում է այնպես, որ բացառվի որևէ գրանցված տարբերակի մրցույթին չմասնակցելու հավանականությունը, և հնարավոր մասնակիցների համար ապահովվեն մրցակցության հավասար պայմաններ (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր):

Կից Ձեզ ենք ներկայացնում արտապատկերում դեղերի պետական գրանցամատյանից, ոչ թե այն նպատակով, որ ցույց տանք, որ ներկայացված բոլոր 3 դեղերն էլ գրանցված են ՀՀ-ում, այլ նրա համար, որպեսզի պարզ լինի, որ բոլոր 3 դեղերն էլ ունեն նույն բաղադրատարրերը (սուլֆամեթոքսազոլ, տրիմեթոպրիմ) և նույն ղոզավորումը (800մգ+160մգ;), ավելին, բոլոր 3 դեղերն էլ ԴԵՂԱՀԱՏԵՐ են:

Հետևաբար բոլոր դեղերն էլ համապատասխանում են տեխնիկական բնութագրին և մասնակցի կողմից թույլ չի տրվել հրավերի, Գնումների մասին օրենքի և Կարգի որևէ կետի խախտում:

N 57 չափաբաժնի մասով ներկայացվել են Դիազոլին-Դարնիցա, Դիազոլին-Ֆարմակ և Դիազոլին անվանումներով դեղերը՝ համապատասխան արտադրողներով:

Ինչպես երևում է թիվ 3 Արձանագրությունից, այս դեպքում ևս պատվիրատուն չի վիճարկում որևէ դեղի չգրանցված լինելու փաստը, այս նշում է, որ ներկայացված է նաև տեխնիկական բնութագրին չհամապատասխանող դեղորայք:

Համաձայն ՀՀ կառավարության 2 մայիսի 2013 թվականի N 502-Ն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետ՝

Եթե Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրուսնցամատյանում (ռեեստր) առկա են նույն բաղադրատարրերով դեղի այլ գրանցված տարբերակներ, ապա դեղի գնման տեխնիկական բնութագիրը կազմվում է այնպես, որ բացառվի որևէ գրանցված տարբերակի՝ մրցույթին չմասնակցելու հավանականությունը, և հնարավոր մասնակիցների համար ապահովվեն մրցակցության հավասար պայմաններ

(հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր):

Կից Ձեզ ենք ներկայացնում արտապատկերում դեղերի պետական գրանցամատյանից, ոչ թե այն նպատակով, որ ցույց տանք, որ ներկայացված բոլոր 3 դեղերն էլ գրանցված են ՀՀ-ում, այլ նրա համար, որպեսզի պարզ լինի, որ բոլոր 3 դեղերն էլ ունեն նույն բաղադրատարրերը (մեբեիդրոլիե) և նույն գոգավորումը (100մգ;), ավելին, բոլոր 3 դեղերն էլ ԴԵՂԱՀԱՏԵՐ են:

Ի դեպ, որպես ապացույց այն պնդմանը, որ դրաժեն դա նույն թաղանթապատ դեղահատն է, չնայած նույնիսկ դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ բերված բոլոր դեղաձևերն էլ հանդիսանում են սոլիդ/պինդ օրալ դեղաձևեր, ամեն դեպքում Ձեզ ենք ներկայացնում Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիրական կենտրոնի կողմից գրություն, որտեղ ապացուցվում է մեր պնդումը:

Նաև Ձեզ ենք ներկայացնում դեղերի պետական գրանցամատյանից ներբեռնված Դիազոլին-Ֆարմակ դեղի տուփի գծապատկերը, որտեղ երևում է, որ գեղաձևը նշված է դրաժե, չնայած որ գրանցամատյանի համապատասխան տողում նույն դրաժեի փոխարեն նշված է «դեղահատեր թաղանթապատ»:

Հետևաբար բոլոր դեղերն էլ համապատասխանում են տեխնիկական բնութագրին և մասնակցի կողմից թույլ չի տրվել հրավերի, Գնումների մասին օրենքի և Կարգի որևէ կետի խախտում:

Հաշվի առնելով վերոնշյալ բազմաթիվ փաստարկները, փաստերը, մեկնաբանությունները, խնդրում ենք Ձեզ չբավարարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2022/160 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 28.02.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/5-

ԴԵՂՈՐԱՅՔ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արջիջի» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/5-ԴԵՂՈՐԱՅՔ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ կից ներկայացնելով «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 16.03.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության (www.gnumner.am կայքում հրապարակվել է 16.03.2022թ. ժամը 17:10-ին) 4.3-րդ կետի համաձայն՝ «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում Հավելված 1.2-ում «էլեկտրոնային աճուրդի հրավերի» բառերի փոխարեն նշված է «գնանշման հարցման հրավերի» բառերը, թիվ 5-րդ, 9-րդ, 22-րդ և 57-րդ չափաբաժինների մասով նշված չեն ֆիրմայի անվանումը և արտադրողը, ինչպես նաև նշված չափաբաժիների մասով ներկայացվել է չգրանցված երկրների դեղորայք:

v. Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Արջիջի» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից eauction.armeps.am համակարգի միջոցով Մասնակցի argg@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին 16.02.2022թ.-ին ժամը 16:22-ին ուղարկվել է հայտում շտկում կատարելու մասին ծանուցում՝ նշելով, որ արձանագրված անհամապատասխանություններին կարող են ծանոթանալ տեսնելով թիվ 2 արձանագրությունը:

vii. «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ ծանուցումը eauction.armeps.am համակարգի միջոցով կարդացվել է 21.03.2022թ. ժամը 18:01-ին:

viii. Հանձնաժողովի 21.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.4-րդ կետի համաձայն՝ Մասնակցի կողմից Հավելված 1.2-ում «գնանշման հարցման հրավերի» բառերը չեն շտկվել «էլեկտրոնային աճուրդի հրավերի» բառերով, ինչպես նաև բացառությամբ 9-րդ

չափաբաժնի, թերի են շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝ 5-րդ չափաբաժնի մասով ներկայացված է նաև չգրանցված դեղորայք, թիվ 22-րդ և 57-րդ չափաբաժինների մասով ներկայացված է նաև տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող դեղորայք:

ix. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2022թ.-ի թիվ 26/26-1/5415-2022 գրությամբ «Արջիջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ

գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 28.02.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/5-ԴԵՂՈՐԱՅՔ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը

զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի

պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 28.02.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/5-ԴԵՂՈՐԱՅՔ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.03.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում Հավելված 1.2-ում «էլեկտրոնային աճուրդի հրավերի» բառերի փոխարեն նշված է «գնանշման հարցման հրավերի» բառերը, թիվ 5-րդ, 9-րդ, 22-րդ և 57-րդ չափաբաժինների մասով նշված չեն ֆիրմայի անվանումը և արտադրողը, ինչպես նաև նշված չափաբաժիների մասով ներկայացվել է չգրանցված երկրների դեղորայք, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Արջիջի» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից eauction.armeps.am համակարգի միջոցով Մասնակցի argg@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին 16.02.2022թ.-ին ժամը 16:22-ին ուղարկվել է հայտում շտկում կատարելու մասին ծանուցում՝ նշելով, որ արձանագրված անհամապատասխանություններին կարող են ծանոթանալ տեսնելով թիվ 2 արձանագրությունը ինչը մասնակցի կողմից համակարգի միջոցով կարդացվել է 21.03.2022թ. ժամը 18:01-ին: Հանձնաժողովի 21.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակցի կողմից Հավելված 1.2-ում «գնանշման հարցման հրավերի» բառերը չեն շտկվել «էլեկտրոնային աճուրդի հրավերի» բառերով, ինչպես նաև բացառությամբ 9-րդ չափաբաժնի, թերի են շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝ 5-րդ չափաբաժնի մասով ներկայացված է նաև չգրանցված դեղորայք, թիվ 22-րդ և 57-րդ չափաբաժինների մասով ներկայացված է նաև տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող դեղորայք, ինչով պայմանավորվախ Հանձնաժողովը որոշել է «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Արջիջի» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/5-ԴԵՂՈՐԱՅՔ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության

դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2022թ.-ի թիվ 26/26-1/5415-2022 գրությամբ «Արջիջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/160 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արջիջի» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**